

**Լ.Մ. ԱՇՈՒՂՅԱՆ**

**ԲԵՐՂ ԵՎ ԱՄՐՈՑ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ  
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ  
(Վանաձոր)**

Ներկայացվել են բառապաշարի բերդ, ամրոց իմաստային դաշտի իմաստաբանական զարգացումները և կառուցվածքային առանձնահատկությունները:

**Առանցքային բառեր.** ամրոց, բերդ, բաղադրական հիմք, իմաստային դաշտ, իմաստափոխություն, իմաստափոխության հիմունքներ:

Բառապաշարը՝ որպես լեզվի ենթահամակարգ, կառուցված է ստորակարգային հատկանիշի հիման վրա, այսինքն՝ բաժանվում է որոշակի բառախմբերի՝ իմաստային դաշտերի, որոնք էլ իրենց հերթին դասդասվում են ավելի փոքր իմաստային խմբերի, բառախմբերի և առանձին բառերի: «Իմաստային դաշտը լեզվական միավորների (հիմնականում՝ բառային) ամբողջություն է, որի տարրերը միավորված են բովանդակային (երբեմն նաև՝ ձևային ցուցիչների ընդհանրության հիման վրա և արտահայտում են նշանակվող երևույթների հասկացական, առարկայական կամ գործառական ընդհանրություններ» [1]:

Սույն աշխատանքի արդիականությունը պայմանավորված է լեզվաբանության բնագավառում մեջիմաստային դաշտերի տեսությանը մեծ տեղ հատկացնելու և կարևորելու հանգամանքով: Այդ բնագավառում հայ լեզվաբանության մեջ որոշակի աշխատանք է կատարվել: Այդ առումով առանձնահատուկ պետք է նշել Հր. Աճառյանի [2], Գ. Զահուկյանի [3] և այլոց վաստակը: Մեր աշխատանքը, հայերենի բառապաշարից ընտրված **բերդ**, **ամրոց** իմաստային խմբի նկարագրության առաջին փորձն է:

Սույն աշխատանքը կատարվել է՝ հիմք ընդունելով հայերեն ստուգաբանական [4] և բացատրական [5] բառարանների ընձեռած լեզվական նյութը: Քննության են ենթարկվել ինչպես բուն, հիմնական իմաստով **բերդ**, **ամրոց** արտահայտող, այնպես էլ բաղիմաստի ճյուղավորման հետևանքով այդ իմաստն ստացած բառերը: Համակողմանի քննության են ենթարկվել **բերդ** և **ամրոց** հասկացությունների անվանումները հայերենում: Կատարվել է խմբի բառերի բառակազմական վերլուծություն էդ. Աղայանի և Գ. Զահուկյանի բառակազմական ուսմունքների յուրօրինակ զուգորդմամբ, այնուհետև ներկայացվել այս բառերի ծագումնաբանությունն ու ստուգաբանությունը, իմաստային տեղաշարժերը, իմաստափոխության հիմունքները:

Ամրոցը կամ բերդը բոլոր կողմերից պաշտպանված և պաշարման պայմաններում և պայքարի նպատակով ամրացված բնակավայր է: Հնագույն ամրոցներն իրար հաջորդող կիսակլոր կամ ուղղանկյուն աշտարակներով և ամրացված մուտքերով աղյուսից, քարից և այլ շինանյութերից կառուցված պաշտպանական շրջապարիսպներ էին, որոնց ներսում սովորաբար կառուցվում էր միջնաբերդը: Ստրկատիրական պետությունների շատ քաղաքներն ամրոցներ էին: Հայկական հնադարյան ամրոցները սովորաբար կառուցվել են դժվարամատուց և բարձրադիր տեղանքներում, շրջափակվել աշտարակավոր կամ բրգաձև պարիսպներով, պատնեշվել հողաթմբերով ու ջրածածկ խրամներով: Աշտարակները կամ բուրգերը բազմահարկ կառույցներ են: Մ.թ. ա. IX-VI դարերում Վանի թագավորության քաղաքները միաժամանակ ամրոցներ էին՝ Տուշպա-Վանը, Արգիշտիխինիլի-Արմավիրը, Էրեբունի-Երևանը և այլն: Անտիկ շրջանի ամրոցաշինության փայլուն օրինակներից է Գառնին: Հայկական հզոր ամրոցներից են նաև Ամբերդը, Սմբատաբերդը, Ներքին Թալինը, Լամբրոնը և այլն: Սահմանապահ ամրոցներում սովորաբար, բացի կայազորից, այլ բնակիչներ չեն եղել:

**Բերդ, ամրոց** հասկացությունները արտահայտվում են *ակառն, ամրական, ամրակողմն, ամրոց, ամրոցիկ, ամրություն, ամուր, ամրոցանի, բերդ, բերդակ, բերդամեջ, բերդամրոց, բերդիկ, բերդեան, բերդորայք, բերդորե, դոյակ, թեմաբերդ, խսար, կլա, դալէ, միջնաբերդ, ներքնաբերդ, վերնաբերդ* բառերով:

Խմբանվանումներում առկա են պարզ և բաղադրյալ բառեր:

Պարզ են *ակառն, ամուր, դոյակ, խսար, կլա, դալէ* բառերը:

Բոլոր բաղադրությունները համադրական են՝ ստեղծված և՛ բառաբարդմամբ, և՛ ածանցմամբ:

**Ամրակողմն, բերդամեջ, թեմաբերդ, միջնաբերդ, ներքնաբերդ, վերնաբերդ** բառերը հոդակապով բուն բարդություններ են, իսկ բերդամրոցը՝ կցական բարդություն: Բուն բարդությունները կազմվել են ամ(ու)ր, թեմ, բերդ, դոյակ, քաղաքառաջնային և միջ(ի)ն, ներք(ի)ն, վեր(ի)ն երկրորդային սերող հիմքերով: Միանալով ա հոդակապին՝ ամ(ու)ր, միջ(ի)ն, ներք(ի)ն, վեր(ի)ն բաղադրիչները ձևավորել են սղատարրա-հավելատարրային հիմքեր: Բաղադրող են բերդ, կողմնառաջնային և ամրոց երկրորդային հիմքերը:

Բարդությունները ստեղծվել են հետևյալ մասնակաղապարներով՝

[ածական + հոդակապ] + գոյական – [ամուր + ա] + կողմն.

[գոյական + ած. ածանց + հոդակապ] + գոյական – [միջ +(ի)ն +ա] + բերդ.

գոյական + [ածական + գոյ. ածանց] – բերդ + [ամ(ու)ր + ոց].

[գոյական + հոդակապ] + գոյական-[բերդ +ա]+ մեջ, [թեմ +ա] + բերդ.

[մակբայ + ած. ածանց + հոդակապ] + գոյական **-[ներք + (հ)ն + ա] + բերդ, [վեր + (հ)ն + ա] + բերդ:**

Ինչպես նկատելի է, խմբում առկա են և՛ առաջնային, և՛ երկրորդային բաղադրություններ:

Բարդությունների բաղադրիչների միջև առկա են հետևյալ կարգի հարաբերություններ՝

որոշիչ-որոշյալ - **ամրակողմն<\*(ամուր կողմն),միջնաբերդ<\*(միջին (դիրք գրավող) բերդ), ներքնաբերդ<\*(ներքին բերդ), վերնաբերդ<\*(վերին բերդ), թեմաբերդ<\*(թեմ ունեցող) բերդ):**

Ածանցումներ են **ամրական, ամրոց, ամրոցանի, ամրոցիկ, բերդակ, բերդեան, բերդիկ, բերդորայք, բերդորէ (ունեն հոգնակի իմաստ)** բառերը: Դրանցում սերողեն առաջնային են **ամուր, բերդ** և երկրորդային՝ **ամրոց** հիմքերը, որոնք բաղադրվել են **-ական, -անի, -ակ, իկ, -եան, -ող, -որէ** պարզև **-որայք(որ + այք)** բաղադրյալ վերջածանցներին:

Բաղադրությունների կազմում տեղի են ունեցել հետևյալ հնչյունափոխությունները՝

**ու>սղում - ամ(ու)րակողմն, բերդամ(ու)րոց.**

**ի> սղում - միջ(ի)նաբերդ, ներք(ի)նաբերդ, վեր(ի)նաբերդ:**

Խմբի անվանումների բոլոր բաղադրական հիմքերը կենսունակ են:

Ստորև կներկայացնենք այս բառերի ծագումնաբանությունը և իմաստային տեղաշարժերը:

**Ակառն:** Հր. Աճառյանը բացատրում է «բերդ, ամրոց» իմաստով և նշում է, որ դրանով բաղադրվել է **ակառանք** «բերդականներ» բառը: Ակառն-ը հուն. փոխառություն է:

Բառը վկայում են ՆՀԲ-ն և Ստ. Մալխասյանցը՝ վերոնշյալ իմաստով (ՆՀԲ, 1, 23, ՀԲԲ, 1, 28):

**Ամրական:** ՆՀԲ-ն նշում է. «որպես տեղի ամուր. ամրութիւն. ամրոց. դղեակ. բերդ» (ՆՀԲ, 1, 75):

ՀԲԲ-ն վկայում է. «ամուր, ամրակառոյց», «ամուր վայր, ամրոց», «ամուր վայրերում, ամրոցներում բնակվող՝ պատսպարվող» (ՀԲԲ, 1, 72):

Արդի հայերենում **ամրական** բառը իմաստի նեղացում է ստացել: Գործածվում է որպես ամուր բառի հոմանիշ՝ «ամուր» իմաստով: Այն հազվադեպ կիրառություն ունի (ԱՀԲԲ, 1, 36):

**Ամրակողմն:** ՆՀԲ-ն և ՀԲԲ-ն բացատրում են՝ «կողմնամրոցի կամ ամրութեան քաղաքի. յուն. ակառն, քաղաք դավթի, ևն» իմաստով (ՆՀԲ, 1, 75, ՀԲԲ, 1, 72):

Արդի հայերենում գործածությունից դուրս է եկել:

**Ամրոց:** Գրաբարում գործածվել է «նոյն ընդամուր», «ամրութիւն. տեղի ամրանալոյ. ծայրամրափակեալ. և մարտկոց», «դղեակ. բերդ. միջնաբերդ. ակառն», «լայնաբար՝ որպէս Ամրութիւն պահպանութեան. պահապանք. պահակ. պահակապան. զօրական», «որպէս ամուր, ամրական. անմատոյց. անմատչելի» իմաստներով (ՆՀԲ, 1, 76):

Ստ. Մալխասյանցը չի նշում «ամրութիւն պահպանութեան. պահապանք. պահակ. պահակապան. զօրական» նշանակությունները, սակայն հավելում է՝ «ամուր փականք, կողպեք» իմաստները (ՀԲԲ, 1, 72):

Արդի հայերենում ամրոց բառը գործածվում է «բնական ամուր տեղ, ամրություն, պնդոց», «արհեստական կերպով ամրացրած դիրք կամ ռազմական կառուցվածք թշնամու հարձակումներից պաշտպանվելու համար, բերդ, ամրություն», (հնց.) «իշխանի՝ ֆեոդալի ամրացված շինություն, դղյակ», (փխբ.) «անհաղթահարելի դժվարություն՝ արգելք», (փխբ.) «աննվաճ երկիր՝ տերություն» իմաստներով (ԱՀԲԲ, 1, 37, ԺՀԼԲԲ, 1, 59):

**Ամրոցանի:** Արձանագրում են ՆՀԲ-ն և ՀԲԲ-ն՝ «ամրոցներ (բոլորը միասին վերցրած), բերդորայք» իմաստով (ՆՀԲ, 1, 76, ՀԲԲ, 1, 72):

Արդի հայերենում **ամրոցանի**-ն գործածական չէ:

**Ամրոցիկ:** ՆՀԲ-ն և ՀԲԲ-ն բացատրում են. «ամրոց փոքրիկ. բերդակ» (ՆՀԲ, 1, 76, ՀԲԲ, 1, 72):

Արդի հայերենում ավելացել են նմանական զուգորդության հիման վրա առաջացած (ռազմ. հնց.) «դաշտային հողաշեն ամրոց՝ արտաքին պատնեշով ու խրամով», (պատմ.) «փղերին բարձվող աշտարակաձև հարմարանք, որն օգտագործվում էր ինչպես ռազմական, այնպես էլ բարձրաստիճան մարդկանց համար որպես փոխադրամիջոց» իմաստափոփոխակները (ԺՀԼԲԲ, 1, 60, ԱՀԲԲ, 1, 37):

**Ամրություն:** Գրաբարում կիրառվել է «տեղի ամրանալոյ կամ պահպանութեան. Վայր անառիկ. բարձրավանդակ. դղեակ. պարիսպ. պատնէշ. ցանկ, փականք զգուշութեան. ապաստան» իմաստներով (ՆՀԲ, 1, 77):

Ստ. Մալխասյանցը վկայում է «ամուր՝ պինդ լինելը», «դիմացկուն, ուժեղ լինելը», «ապահով, պատսպարված լինելը», «ամուր տեղ, ամուր դիրք, ամրոց» իմաստներով:

Արդի հայերենում վերջին իմաստի հիման վրա կցորդական զուգորդությամբ առաջացել է «բնական՝ դժվար մատչելի վայր» իմաստափոփոխակը (ԺՀԼԲԲ, 1, 60, ԱՀԲԲ, 1, 37):

**Ամուր:** Հր. Աճառյանը բառը վկայում է «զորեղ, հաստատուն, պինդ», «ամուր տեղ. ամրոց» իմաստներով, նշում, որ դրանով բաղադրվել է նաև նույն իմաստն ունեցող **ամրական՝** «ամուր», «բերդ», «բերդական» բառը (ՀԱԲ, 1, 161):

Ունի հնդեվրոպական ծագում (ՀՍԲ, 46):

ՆՀԲ-ն բացատրում է «ամուր տեղի. տեղի ապաստանի կամ փոխարեան. զգուշութիւն. պահպանութիւն. մարտկոց. պարիսպ. պատնէշ, բերդ. ակառն. աշտարակ. անձաւ» իմաստներով (ՆՀԲ, 1, 73):

ՀԲԲ-ն նշում է. «պինդ, ուժեղ», «հաստատուն, դիմացկուն», «ապահով, անվտանգ», «ամուր շինել, խոսել», «բնական կամ արուեստական կերպով ամրացրած դիրք կամ կառուցվածք՝ թշնամու դեմ պաշտպանվելու նպատակով» (ՀԲԲ, 1, 68):

**Ամուր**-ն իր բուն, հիմնական նշանակությամբ ածական է, ամրոցի իմաստն ստացել էր կցորդական զուգորդությամբ, որը, սակայն, արդի հայերենում կորցրել է (ԺՀԼԲԲ, 1, 60-61, ԱՀԲԲ, 1, 38):

**Բերդ**: Հր. Աճառյանը, Գ. Զահուկյանը և Ստ. Մալխասյանցն ընդունում են բառի ասոր. ծագումը (bi-ir-tu «բերդ, ամրոց») (ՀՍԲ, 1, 442-443, ՀԼՊ, ՆԺ, 306, 393, 455, 476):

Գ. Ղափանցյանը **բերդ**-ը համարում է ուրարտ. փոխառություն՝ նշելով. «petra «բերդ» անունը անցել է հայերին բերդ և ասուրներին birtu անվանումներով» (Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Եր., , 1940, էջ 40):

ՆՀԲ-ն բացատրում է. «շինուած բարձրապարիսպի վերնակողմն քաղաքի՝ իբրև ամրութիւն. ամրակողմն քաղաքին բրգօք և աշտարակօք. Կամ ուրոյն շինեա աւան անառիկ՝ յանդերձ զօրօք և զինուք. դղեակ. ամրոց. ակառն» (ՆՀԲ, 1, 483):

ՀԲԲ-ն վկայում է. «քաղաքի բարձր մասում կամ այլ տեղ՝ ամուր պարիսպներով շրջապատված և պարսպած տեղ, ուր ապաստանում են զօրքը (և բնակիչները) և պաշտպանվում թշնամու հարձակումների դեմ. ամրոց, դղեակ, ակառն», «բերդ կամ այլ ամրացրած տեղ, որտեղ պահում են բանտարկեալներին. բանտ», «ԴՁ (չորրորդ ձայնին) պատկանող մի եղանակ» (ՀԲԲ, 1, 36):

Արդի հայերենում ավելացել են (փխբ.) «անառիկ, անմատչելի տեղ՝ երկիր և այլն», «խաղերի մէջ հակառակորդի հարձակումից ազատ տեղ, բինա», (շախմատ. հնց.) «նավակ», «տեղանուն» իմաստափոփոխակները (ԱՀԲԲ, 1, 189, ԺՀԼԲԲ, 1, 318):

**Բերդ**-ը հայերենում կենսունակ է որպես բաղադրական հիմք. կազմել է **միջնաբերդ, բերդամրոց, ներքնաբերդ, վերնաբերդ, բերդակալ, բերդաքաղաք, բերդամարտութիւն, բերդանման, բերդալեր, բերդակռիվ, բերդասար** և այլ բաղադրություններ: **Բերդ**-ով են կազմվել նաև քաղաքի ամրություն նշանակող **բերդակ, բերդամրոց, բերդիկ, բերդապարիսպ, բերդեան, բերդորայք, բերդորէ, միջնաբերդ, ներքնաբերդ, վերնաբերդ** բառերը:

Բերդակ (բերդիկ): Գրաբարում **բերդակ**-ը գործածվել է «փոքր բերդ» իմաստով (ԳԲ, ՆՀԲՁԲ, 74):

Արդի հայերենում չի իմաստափոխվել (ԱՀԲԲ, 1, 189, ԺՀԼԲԲ, 1, 31):

«Փոքր բերդ» իմաստով միջին հայերենում գործածվել է **բերդիկ** բառը (ՄՀԲ, 1, 121):

**Բերդամեջ:** Գրաբարում նշանակել է «միջավայրն բերդի. Բուն դղեակն» (ՆՀԲ, 1, 484):

Աշխարհաբարում չի իմաստափոխվել (ՀԲԲ, 1, 189, ԺՀԼԲԲ, 1, 318, ԱՀԲԲ, 1, 189):

**Բերդամրոց:** Ե՛վ գրաբարում, և՛ արդի հայերենում բառը գործածվում է «բերդ, ամրոց» իմաստով (ՆՀԲ, 1, 484, ՀԲԲ, 1, 364, ԱՀԲԲ, 1, 189, ԺՀԼԲԲ, 1, 318):

Բերդեան: Բառը վկայում են ՆՀԲ-ն և ՀԲԲ-ն՝ «բերդք, բերդորայք» իմաստով (ՆՀԲ, 1, 484, ՀԲԲ, 1, 364):

Ըստ քաղաքում բերդի գրաված դիրքի՝ առաջացել են հետևյալ անվանումները՝ **միջնաբերդ** «միջին կամ ներքին բերդ», **ներքնաբերդ** «ստորինբերդ», **վերնաբերդ** «քաղաքի բարձր կետում շինված բերդ»: Հարկ է նշել, որ **միջնաբերդ** բառն արդի հայերենում փոխաբերացմամբ՝ նմանական զուգորդության հիման վրա ստացել է «անմատչելի՝ անառիկ տեղ՝ երկիր՝ տերություն» և «որևէ բնագավառի խոշորագույն և հզորագույն կենտրոն՝ օջախ» իմաստափոփոխակները (ԱՀԲԲ, 2, 1014):

**Բերդորայք:** Բառն արձանագրում է ՀԲԲ-ն՝ «բոլոր բերդերը միասին վերցրած» իմաստով (ԺՀԼԲԲ, 1, 318, ԱՀԲԲ, 1, 189): Նույն իմաստի համար Ստ. Մալխասյանցը վկայում է նաև բերդորե, բերդեան և բերդորե տարբերակները (ՀԲԲ, 1, 364):

Արդի հայերենում նշված անվանումները գործածական չեն:

**Դոյակ (<դղեակ):** Հր. Աճառյանը **դոյակ**-ի ծագումը հարցականով կապում է իրան. **dula** «բարձր բլուր» բառի հետ, քանի որ հին ժամանակ դոյակները բարձունքների վրա էին շինում (ՀԱԲ, 1, 673): Գ. Ջահուկյանը ևս ընդունում է բառի իրան. ծագումը, միաժամանակ նշում, որ բուն աղբյուրը հավաստված չէ (ՀՍԲ, 200):

ՆՀԲ-ն բառը բացատրում է «բերդ, ամրոց, ամուր. ամրակողմն քաղաքին. ծայրաքաղաք. ակառն» իմաստով (ՆՀԲ, 1, 636):

Ստ. Մալխասյանցը նշում է. «ամրացրած տեղ, ամրոց, բերդ», «ամրոց-բնակատեղի իշխանի, թագաւորի ևն», (փխբ.) «գեղեցիկ բնակարան» (ՀԲԲ, 1, 531):

Արդի հայերենում տեղի է ունեցել պատմական հնչյունափոխություն՝ **եա>յա:** **Դոյակ**-ն իմաստափոխության չի ենթարկվել (ԺՀԼԲԲ, 1, 518, ԱՀԲԲ, 1, 303):

**Թեմաբերդ:** Լ. Հովհաննիսյանը բացատրում է «բերդ, բերդաքաղաք» (ԳԲ, ՆՀԲՁԲ, 121), իսկ ՄՀԲ-ն՝ «թեմ ունեցող բերդ, ամրոց» իմաստով (ՄՀԲ, 1, 121):

Արդի հայերենում գործածական չէ:

**հսար:** Արաբ. *hisar* «պաշարել, պաշարում, բերդ, պարիսպ» բառի փոխառություն է: ՄՀԲ-ն բացատրում է «պաշարում, պաշարելը», «բերդ» իմաստներով (ՄՀԲ, 1, 357):

Նույն կերպ է վկայում նաև Ստ. Մալխասյանցը (2, 305):

**Կլա (<կլայ):** Բառն ունի արաբ. ծագում (qal'a «բերդ, ամրոց») (ՀԱԲ, ՀԱԲ,2, 599, ՀԲԲ,2, 442, ՀԱԲ,408):

Գրաբարում գործածվել է «ամրոց. բերդ. որտեղից՝ Հռոմկլայ կամ Կլայն հոռոմ - էական» իմաստով (ՆՀԲ, 1, 1103) (ՀԱԲ, 2, 599, ՀԲԲ,2, 442, ՀԱԲ, 408):

Նույն իմաստով է կիրառվել նաև միջին հայերենում (ՄՀԲ, 1, 399):

Աշխարհաբարում բառը չի իմաստափոխվել, սակայն դարձել է հնաբանություն: Այն արդի հայերենում ենթարկվել է պատմական հնչյունափոխության. կորցրել է *յ* վերջնահնչյունը, (ՀԲԲ, 2, 442, ԱՀԲԲ, 1, 736, ԺՀԼԲԲ, 3, 14):

**Ղալէ:** Միջին հայերենում կատարված արաբ. փոխառություն է. **Կլա** բառի միջին հայերենյան տարբերակն է, գործածվել է «բերդ, ամրոց» իմաստով (ՄՀԲ, 2, 65):

Ստ. Մալխասյանցը վկայում է նաև «մասնատրապես՝ Շուշի քաղաքը» իմաստով (ՀԲԲ, 3, 183):

Արդի հայերենում բառը գործածությունից դուրս է եկել:

**Բերդևամրոց** հասկացությունների անվանումների քննությունը ցույց է տալիս.

1. Խմբում առկա են և՛ պարզ (**ակառն, ամուր, բերդ, դոյակ, կլա**), և՛ բաղադրյալ անվանումներ: Բաղադրությունները կազմված են և՛ **բառաբարդմամբ (ամրակողմն, միջնաբերդ, բերդամրոցևայլն)**, և՛ ածանցմամբ (**ամրական, ամրոց, բերդակ, բերդորայք**ևայլն):

2. Բուն **ամրոցի**-ի անվանումներ են **ակառն, ամրոց, կլա, դոյակ, բերդ** և այլն, իսկ **ամուր, ամրական, ամրություն, ամրակողմն** անվանումներն այդ իմաստն ստացել են բառիմաստի ընդլայնման հետևանքով:

3. Խմբի բառերից հայոց լեզվի պատմություն ընթացքում բառիմաստի ընդլայնում են ստացել **ամրոց, ամրոցիկ, ամրություն, բերդ** անվանումները, իսկ **ակառն, ամրակողմն, ամրոցանի, բերդեան, կլա** և այլն գործածությունից դուրս են եկել, **ամուր**-ը և **ամրական**-ը կորցրել են այս իմաստը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Лингвистический энциклопедический словарь, Языкознание / Под. ред. Ярцевой В. Н. - М.: Советская энциклопедия, 1991. - 683с.

2. **Աճառյան Հր.Հ.** Հայոց լեզվի պատմություն: Մաս 1.- Եր.: Պետհամալսարանի հրատ., 1940.- 356 էջ:
3. **Ջահուկյան Գ.Բ.** Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան.- Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987.- 748 էջ:
4. **Աճառյան Հր.** Հայերեն արմատական բառարան (այսուհետ՝ ՀԱԲ).- ՀՀ. 1-4. -Եր., 1979, էջ 699, 687, 635, 674: **Ջահուկյան Գ.Բ.** Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետ՝ ՀԱԲ).- Եր.: «Ասողիկ» հրատ., 2010.- 819 էջ:
5. **Աւետիքեան Գ., Սիրմելեան Խ., Աւգերեան Մ.** Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետ՝ ՆՀԲ).- ՀՀ. 1, 2; **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.** Միջին հայերենի բառարան (այսուհետ՝ ՄՀԲ).- ՀՀ. 1, 2, Եր.: Համալսարանի հրատ., 1987, 1990, էջեր 419, 470: **Մախասեանց Ստ.** Հայերէն բացատրական բառարան (այսուհետ՝ ՀԲԲ), հհ. 1-4, Եր., 1944-1945, էջեր 608, 512, 614, 647: **Աղայան Էդ.** Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետ՝ ԱՀԲԲ).- ՀՀ. 1,2, Եր., 1976, էջեր 929, 930-1615: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, (այսուհետ՝ ԺՀԲԲ), հհ. 1-4, Եր., 1969, 1972, 1974, 1980, էջեր 601, 714, 574, 828:

**Л.М. АШУГЯН**

**НАИМЕНОВАНИЯ ПОНЯТИЙ “ЗАМОК” И “КРЕПОСТЬ”  
В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ**

Исследованы наименования понятий “*замок*”, “*крепость*” в армянском языке. Рассмотрены как слова, выражающие значение “*крепость*”, так и слова, получившие этот смысл в результате семантического разветвления. Проведен словообразовательный анализ данной группы слов, представлены их генеалогические и этимологические происхождения, смысловые изменения, произошедшие в ходе истории языка, виды семантических изменений на основании этих изменений и по результатам семантического развития.

**Ключевые слова:** замок, крепость, составная основа, семантическое поле, семантические изменения, основы семантических изменений.

**L.M. ASHUGHYAN**

**THE NAMES OF THE CONCEPTS OF CASTLE, FORTRESS IN  
ARMENIAN**

In this article, the names of the concepts “*Castle*, *fortress*” in Armenian have been studied. We have focused on both the words denoting *castle*, *fortress* in their first meaning and the words which have acquired this very meaning due to semantic changes. These words are analyzed according to the unique association of Ed. Aghayan’s and G. Jahukyan’s word formation theories. We have also dwelt upon their etymology, semantic transformations in the course of time, their semantic changes according to the principles of semantic changes and the result of semantic evolution.

**Keywords:** castle, fortress, semantic field, derivational base, semantic change, principles of semantic changes.